

ՀԱՆԴԵՍ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ԺԱՌ ՏԻԵՍՏՈՒԹՅԱՆ ՑԱԿՆՈՅ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՊԱՐՍԿԱՍՏԱՆ

(Տես Հայ. ԽԲ. էջ 83)

Բ

Արտպատական. — Քիչրոց. — Զուղայի մաքսառութեան. — Անդիխական և անապատական. — Պարսիկ ուղևորի աղման. — Մարտան. — Քիշրոտ ծերանի մաքսայի մը. — Պարսկական և նորինատութեան. — Շահ Արաւագ ինն հարիբ իննաւուն և ինն կարաւանատանց մլկն. — Դասիքիու ոստիկանուրեան. — Տերլիջի մը բարիմադրութիւնը. — Սոփիա համակին:

Կ Ապրիլ. — Երկու օր հարկաւոր են դեռակն անցնելու ժամանակ խորտակուած կառքը նորոգելու համար: Վերջապէս ուսւ և պարսիկ գարբնաց միաձեռն ճարտարութեամբ՝ 'ի Զուղայ կը հասնինք, Շուսաց և Պարսից սահմանագիծ երասիսայ ափանց վրայ շինուած աղքատին գիւղ մը:

Երասին՝ հին Մարտաց հոչակաւորաց զետն՝ լոնդ մէջ կարսի և կարնոյ լեռներէն կը բղիմի, և վէայաստան Արարատայ լայնութեան աստիճանին կտրելով կասպից ծովը կը թափի, երկու օժանդակ՝ կուր և ձաւատ՝ գետերն ընդունելէն վերջն: Կ'անցնիմ անոր ափանքն և Զուղայի հին գերեզմանքն, ու կը մտնեմ թղթատարական կայտանն, ուր համեղ վիկաց մը, հաւեղինք և մածւնով հանդերձ ինձ համար պատրաստուած է: Յետ ճաշու լաստափայտով կ'անցնիմ զգեսն ու կ'երթամ մաքսապետին տունն, որոյ համար Տփխիսու պարսիկ հիւպատան յանձնարարական թուղթ մը տուած էր

մեզ: Մառայից բազմութիւն մը կտմ կը ծխեն և կամ կը ննջեն դրան զիմոց. անոնցմէ մէկն յանձնարարագիրն առնըլով՝ կը հրամայէ մեզ արտաքոյ որմոց տակ՝ հողակոյտին վրայ նատելու: Քառորդէ մը վերջը դառնալով՝ կ'իմացը նէ մեզ թէ Աղան առ ժամն կը հանգչի, և պիտի ընդունի զմեզ արթնցած ատենն:

Պարսիկ պաշտօնակալին բնակութիւնն աւազուած հրապարակի մը վրայ շինուած է, որոյ շուրջ՝ կարաւաններէ բերուած անմիւ բեռինք գիգուած ժողովուած են. այս ապրանքս հոն ձգուած կը մնան, մինչև որ մաքսատան կարգն վճարի: Բեռանցս գիգին ետեն հողապատճենով հեռագրական թելից ցած տուն մը կը նշանաբեմ: Անդղիացւոց հեռագրական գծին կայտարանն է, որ ըզ-Հնդկաստան թագաւորանիստ մայրաքաղաքին հետ կը միացընէ, անցնելով բրուսիոյ, Շուսիոյ և Պարսից վրայէն, և ստորածավետոյ պարանով մը՝ ունելով սկիզբն՝ 'ի Պէնտեր-Պուշիր՝ Պարսկական ծոցը կը յանգի: Թելքն՝ երկութեաց թափու սեանց վրայ հաստատուած՝ ինչպէս արդէն՝ 'ի կովկաս ալ տեսանք, ինաւորով մանաւոնդ թէ հաստատուն կերպով մանաւոնդ կ'երեին:

Զուղայի անդղիական հեռագրատան վերատեսուցն Պ. Օֆնագամով, մեր գործակատարն կը լինի՝ զմեզ՝ 'ի Պարսկաստան մոցընելու: Լաւ գաղղիերէն գիտէ, ու մեծ հաճութեամբ մեղ ժառա-

յելու յօժարամիտ՝ ուղևորութեան ձիեցը կը փարձէ և ծառայքը կը հոգայ. մեր ոռու պօլերն յարծաթ դրամ կը փոխէ, և մեզի գարձուած ստակն՝ ջուրեպանաց՝ իբր կանիթիկ վճար ընդունել կու տայ, պատուիրելով մեզ վերջին յանձնարարութեամբ՝ չըրշատարաց պահանջից տեղի չտալ, որք 'ի ճանապարհին պիտի դիմէին քանի մի բուման առնըլու համար. յայսմ մասին փօքրագոյն ակնածութիւնն կրնարը մեզ դաւրէժ չհասնած՝ ճանապարհին վրայ թողուելու պատճառը լինել.

Դարձեալ քանի մի տեղեկութիւններ կու տայ ինձի այսուհետեւ ապրելու կերպին նկատմամբ: Ունայն տեղ գանդատեցայ եւ ոռու թղթատարական կոյարանացն յարդարանաց և փայտեայ անկողնոցն վրայ, այս յետին միխթարութենէ ևս հարկ է որ հրաժարիմ ասկէց վերջն: Զեր դադարքն, կ'ըսէ, պիտի ինին հողմահար բաց կարաւանատունք, ձեր անկողինն՝ սոսկ գետին, բարձն՝ ձեր ձիոյն համեստն. նոյն իսկ յարդի վրայ ննջելու միխթարութիւնն անգամ պիտի չունենաք, վասն զի ձիոցն իսկ կը պակսի, որք և ամսէ մ'ի վեր ստիպուած են նորարշյադալար խոտով ապրելու »:

Այն ժամուն որ արդէն ամենայն պատրաստութիւնք լիցցած են, և ուղիին նախանդն վաղուան թողուած է, յանկարծ դուռն կը բացուի. պարսիկ պաշտօնակալն իր ամէն ծառավաքը հետն առած՝ ծանրութեամբ ներս կը մտնէ, և ձեռքն սրտին վրայ դրած՝ իր պատրաստական ծառայութիւնը կը նուիրէ մեզ: Ես ալ մարդավարութեամբ նոյն ձեն կ'առնում. « Զեր մեծութիւնն աղէկ հանգչեցաւ »: Վայրիկեան մը կը տարակուի, և հարցուած կը հետազօտէ, իմանալու համար թէ արդեզք ծաղը կ'ընսմ զինքը. և առա իր ծանրութիւնն յառաջ վարելով, միւսանգամ մեզ ծառայելու յօժարութիւնը կը յայտնէ: Այսպէս եղաւ իրանի պաշտօնատեարց հետ վերաբերութեանցս սկիզբն: Եւ պակայն այս գանդաղ ան-

ձերն՝ չունի այն մեծութիւնն զոր կ'ակրան մեծանձնութեամբ չնորհեցի իրեն: Այս պաշտօնակալը մաքսատան ամբողջ եկամուան իրեն կ'առնու, և Արտպատականի կուսակալէն ջուղայի լաստափայուը բանեցընելու չնորհը վարձու առած է:

Արբայից արբայի տէրութեան մէջ դասակարգութեան որ և է աստիճանի պաշտամններն առաւելագոյն դրամ մատուցողին կը չնորհուին: Լաստափայտն քառասուն հազար ֆանգաց վճռուած է, սակայն չնորհընկալն՝ ազատ է ուղաձին պէս և առանց վաւերացման անցից մաքսն որոշելու:

Արտպատականի կուսակալն ես, որոյ ոռոճին մաքսատանս եկամուտն է, բընաւ չ'արգելուր որ ամենայն հարկատուք չհարսատահարուին, որպէս զի վարձակալութեան արժողութիւնն իր բարձրագոյն կետին բարձրանայ: Ուստի իրմէ ջուղայի արժանապատուութիւնը ստանալու համար, ոչ միայն քան որ և իցէ առ այն հետամուտ եղող զի մատուցած գինը գերազանցելու է: այլ նաև այս փափուկ պաշտամններս կատարելու հարկաւոր եղած խորամանգութեան սոսոյդ առուն և համբաւ մը իր քովի դրաւական դնելու է:

7 Ապրիլ. — Մեր կարաւանին առաջին հանգուցին հասանք ահաւասիկ: Ուիժ ժամ՝ տեսեց. բայց ձիավարելուն հաճոյքն և ամէն անդունդի մէջ կործանելու պատրաստ եղաւ՝ ահաւելի ոռւս պնդակառքէն ազատած լինելու ուրախութիւնն՝ ամէն ատամութիւն մոռցընել կու տան:

Ջուղայէն մեկնած ժամանակ՝ մեր ուղեցոյքն երկար շրջան մ'ընել տուին մեզ, գիւղ մը հասնելու համար. և հոն՝ Պ. Օվագադամովի վարձած զօրաւոր ձիերն, ուրիշ անոպիտան դրաստից հետ փոխելու համար, որք ոտն յօտանէ փոխել կարող չեն. փոխանակութիւնն ամենայն գիւրութեամբ յաջողեցաւ և լաւ ձիանքն 'ի ջուղայ վերադան:

Հինգ ժամու չափ լեռնային ու վայ-

բագ կրծի մը մէջ քայլեցինք, որոց յա-
ջորդեց բարձրաբերձ բրովկը ընդհա-
տեալ ձոր մը, որոց գոյնադոյն երեսիթ-
ներն ՚ի կանաչազուարժն գունէն սկը-
սեալ, թէպէտ բնաւ գալարութիւն մը
շընծայեն կարկառակոյտիս, մինչև ՚ի
միջնադոյն կարմիրն կը զանազանէին:
Գիշերոյ մօտ ուղեցոյցքն մէկմէկու հետ
խորհրդակցելու սկսան՝ որոշելու հա-
մար թէ պէտք էր արդեօք մեր աջա-
կողմն գտնուած քիւրտ վրանաբնակ
բազմութեան մէջ սպասել օրուան լու-
սանալուն, թէ լսա ևս էր յառաջ վա-
րել ընթացքնիս մինչև լերան ստրուն՝
գիւղմը: Այսպիսի խորհրդակցութեան
ժամանակ՝ թափառական ժողովուրդն
ճամբուն վրայ դիզուեցաւ, և այնպիսի
նայուածքով մընայեցան ՚ի մեզ՝ որ շատ
սիրտ չէր տար մեզ իրենց ասպնջակա-
նութիւնը խնդրելու համարձակել. ուս
տի կարաւանն իր ուղին յառաջ վարեց,
և քիչ վերջը բանուկ ճանապարհը թող-
լով դաշտաց մէջն արշաւակի սրացաւ
զիւղին ուղղութեամբ:

Ի՞նչպէս կրցանք արդեօք հասնիլ հոն
գիշերանց, առանց լրսնի և առանց
աստղներու. Հգիտեմ:

Կարաւանատունն բաւական ընդար-
ձակութեամբ հողապատնէջ հրապա-
րակ մ՚է, որոյ չորս կողմն նոյն նիւթե-
րով շարք մը սենեակներ շինուած են
իրենց հողածածք պատշգամնիւն հան-
գերձ: Խրաբանչիւր ուղեոր այս սե-
նեակներէն մին կ'ընդունի, յորում հա-
սած ատենն՝ իր աղին և պաշարը վար
կ'իշեցնէ. միայն՝ մարտ ամսուն մէջ
այս լեռնոյին երկրիս մէջ ցուրտ ըլլա-
լուն պատճառաւ, ջորեապանք այս շա-
փազանց հօփահարեալ բնակարանքը
կը թողուն և ախոռոց մէջ կը քաշուին,
ուր ձիերն անոյշ լերմութիւն մի կը
ծաւալին:

Մենեկապանն՝ մեզի փոքր, թաց և
անվատուհան սենեակ մը կու տայ բնա-
կելու, որոյ գուռնն փականաց տեղ՝
չուանով կը փակուի. այսպիսի պատիւ-
մը ինծի չի գար, այլ ընդ հակառակն
կը պահանջեմ որ մեզմէ առաջ հասնող

սակաւաթիւ ուղեորաց հետ՝ ախոռին
մասնակցելու շնորհն ըլլուի մեզի: Տե-
ղին պակաս չէ. վասն զի Պարսիկը ա-
մէն բանէ աւելի ձմեռուան խստութե-
նէ վախնալով, այսպիսի գառն եղա-
նակի մէջ ուղի չեն ինկնար: Բայց կա-
րաւանաց թուոյն նուազելուն պատ-
ճակ միայն ցուրտն չէ. անցեալ տարի
ահաւոր եղան Քիւրտերու արշաւանքն.
այս վայրենի ցեղերն սահմանակից
գիւղերը կողոպտեցին, բնակիչները
խողխողեցին, և ահ ու երկիւղ ձգեցին
գաւառին մէջ: Այս կոտորածէս փա-
խրսեաց գիւղացիքն չհասան երկիրնե-
րը մշակելու, որով սովէն նեղուած՝
ճանապարհաց վրայ յարձակեցան, և
իրենք զիրենիք պաշտպանելու անրաւա-
կան կարաւանները կողոպտեցին:

Վայրենի կիրճ մը անցնելու ժամա-
նակ՝ հասան մեզ հինգ վեց քոջազէն
Պարսիկը. այս ձիաւոքս մեզմէ առաջ
անցնելու տեղ՝ մեր հետոց ետևէն ըս-
կրսան գալ, թողով մեզ միշտ ամբո-
խին առնէն երթալու պատիւն. այս
իրիկուն՝ կը լսինք որ մէկմէկու ուրա-
խակից կը լինին, հանդոյցը՝ քաջ ֆա-
րակուիներով կտրած լինելուն հա-
մար. վասն զի քիչ անդամ աւազակըն
վրանին կը յարձըկին, ճանշնալով Եւ-
րոպացւոց զինուց ուժը, միանգամայն
գիսնալով թէ ոչ երբէք արևմտեայք
առանց զիմուկակելու կը թողուն որ
զիրենք մերկացընեն:

Պարծենալով վրաս կը նայիմ: Մի-
թէ կարելի է որ իմ հասակովս և տե-
սակովս մանուկ մը՝ զիւրտս, այն-
պիսի խուժագութ թափառականներ՝
վախցընէ: Այս մոտածութիւնս կը
զուարթացընէ զի միանգամայն և կը
հանդարտեցընէ:

Մեր ուղեկիցները վստահացընելէ
և իրենց մեր արիական պաշտպանու-
թիւնը խոսանալէն յետոյ, կը սկսինք
իւրաքանչիւր ոք իր աղիսը բանալ, Այն
ատեն զարմանքով զիտելու ժամա-
նակ՝ ուղեկիցաց կարաւանով ուղեո-
լու, համար ունեցած այնպիսի յար-
մար և ճոխ հանդերձանքը, կրցանք

գաղտափար մ'առնուլ թէ ինչ պիտի պակսի մեզի մինչև որ 'ի Դավրէծ՝ առաջին քաղաքն հասնինք, ուր որ կորբէի պիտի լինի մեզ մեր կահն ևս պատրաստել ու հոգալ:

Գորդով պատսպարուած և կաշեայ կամարներով փակուող մաֆրէք ըսուած մեծամեծ պայուսակաց մէջ զետեղուած են պարսիկ անկողինք, խարդէ՝ խապն (գիշերազգեստ), որ ներկեալ, ստուար բամպակակերտ՝ ոտից օժոց մ'է՝ երր գործածել ուզուի բաւական է քառածալ դարձընել զայն, անոր մէկ ծայրն զալարել բարձին նման և գետինն տարածանել, ու իսկոյն վրան հանդշէլ. այս զիշրատար անկողինք ամբողջ Պարսկաստանի մէջ գործածական է: Հալաւն՝ որ ծածկոցի տեսակ մ'է՝ ձմեռ զիշերները մարմնոյ վրայ կ'առնուի, իսկ զեղեցիկ եղանակի մէջ անդորդածական կը լինի, վասն զի ննջերո համար զգեստ հանելու սովորութիւն չկայ. Մաֆրէքաց մէջ կան դարձեալ փոխելու հանդերձն ու գորգք՝ գետինն տարածելու համար, երր ու զեղորն 'ի հանգոյց համնի:

Խոկ գուրձին ըսուած փոքրագոյն պայուսակաց մէջ կը գտնուին տնական ամենայն անօթք. Վիլաւի սան, ձուազեղի (Աիմրու) տապակ, լուացման համար ծառայող սոսոմանք, չայի սամովարք, և վերջապէս հացի, բրնձի, մոյ, բանջարեղինաց, շաքարի և ճրագի ամէն տեսակ պաշար, զորս պէտք է 'ի միասին շրջեցընել այսպիսի ուղեւորութեան մէջ, ուր անկարելի է ամէն հանգուցին գտնել զայնս. և ուր որ ընդհանրապէս ներ մտած ժամանակ ուրիշ բան չի գտնուիր, բայց եթէ ձիոց յարդ, և հեծելոցն ապաստանարան մը: Գուրձինք ծանօթ են Գաղղիոյ մէջ. և յորմէ հետէ պարսիկ գորգոց սովորութիւնն մեր կահ կարասեաց թուոյն մէջ մտաւ, սկսան կահ կարասիկն ծածկելու գործածուիլ:

Իրանի մէջ առաջին իրիկունն մեր ընկերակցաց պատրաստութիւնքը նախանձալից աշքով մը դիտելով կ'ահ-

ցընեմ. մինչդեռ մեզի համար թեթև վերարկու մը՝ անկողնոց տեղ պիտի բռնէ, մախաղնիս՝ բարձի տեղ, և մորթէ ծածկոց մը ամենայն բան ծածկէ պիտի: Շւղերութեան մառաննիս ևս ակնկալիք մ'է նոյնապէս: Պոյաք և պընակը անբաւականք են ամենակին, և մեր նոր ծառայքն խոհակեր մը և սեղանաղիր մը, պատառառտունք, ցաւելով կ'ողբան իրենց սովորական անօթքը չունենալուն և կերակուրները կարգաւրելուու ստիպուած ինչելուն համար. Կարծես ծանր զանցառութիւն մ'է սեղանոյ սովորական կարգացն. պարսկական սովորոյթքն պահանջելով՝ որ ճաշու պէս պէս համարամէն մէկ անգամով բերուին սեղանոյն վրայ: Կրցածիս չափի կը հանգարտուցընեմ այս բարի մարդկանց տրտունչը, ապահովցընելով զիշերնք՝ որ 'ի Դավրէծ եղական խոհանոցի մը կահ ու կազմածն պիտի գնեմ: Տեղական օրինաց այսպիսի յարդանքն՝ վրոպվեալ սրտից նախնի հանգարտութիւնը կու տոյ դարձեալ: Ժամը տամնին զբեթէ ամենայն ոք քնացած է կարաւանատան մէջ. ճրագունք կը մարին, և միայն կրակարանին կայծերն կը փալիքին, որոնց քով կէս մը քնացած մարդու մը ստուերագիծն կը նշմարուի, որ մատերով քանի մը վառուած ածուխ կը բռնէ զալիանը վառելու համար, որ երբեք անգործ չի մնար, նոյն իսկ գիշերոյ հանգստեան ատեն:

8 Ապրիլ. — Արշալուսոյն՝ չարվատար պաշին՝ (գլխաւորն) մեծածայն էս Ալլան մը հնչեցընելով կը զարթուցանէ զմեզ: Պինդ է անկողինն իրաւցընէ. և շատ ուրախ եմ օրուան լուսանալուն վրայ, յուսալով ճամբուն վրայ թօմափել վրայէս ոտից ցդլուխս եղած թմրութիւնը: Քիչ ատենէն ամէնքնիս ոտքի վրայ ենք, և ուղի ինկնալու պատրաստք. աղխով կը փակուին ուղեկցաց մաֆրէքն. կրաքանչիւր ջորեպան գարձեալ իր բռն ձիոյն համետին վրայ կը գնէ, հաստատելով զայն այժու մորթոց չուանով, և կ'եւ-

նենք կարաւաննատունէն՝ պահապանին
ձեռքն քանի մը ստակ թողլով, որոյ
շնորհակալութիւնքն և բարեմաղթու-
թիւնքն մինչև ՚ի հեռուն կը հասնի առ-
մեջ, Անոր շնորհակալեաց ցոյցն զար-
մանք բերաս վրաս . այնպէս երեցած է
ինծի իրը թէ Պարսիկը մեծ արժէք մը
կու տան իրենց ըրած ծառայութեանց:
Այն ատեն ուղեկցաց մէկն՝ որոյ իսոս,
տացեր եմ՝ պաշտպաննել զինքն Քիւր-
տերուն դէմ՝ եթէ յանկարծ վրանիս
յարձըկելու լինին, կը հասկցընէ ին-
ծի թէ Կարաւաննատունց մեծ մասն
մզկթաց պէչ՝ կրօնական հաստատու-
թիւնք են, և հիմնագրին սերնդոց ա-
ռատաճեռնութեամբն կը պահուին:
Այս յետինքս հաւատարիմ՝ մարդու
մը վճարը կու տան, որ կ'ընդունի ըզ-
կարաւանս, և ամէն առուու և իրիկուն
կը բանայ և կը փակէ զգրունս: Ուղե-
որքն պարտական չեն իրեն փարձ մը
տալու, որչափ ալ կենան անդ, բայց
եթէ երբ անձնական ծառայութիւնն մը
ուղեն իրմէ . զորեպանաց վաճառած
քիչ մը յարդէն, փայտէն և թթուած
կաթէն շահ մ'ունի:

Պարսկաստանի հասարակաց օգտի
շինուածոց մեծագոյն մասն նման պա-
րագայով կառուցուած են, և ուղերձն
պարտական են նոյնպէս զետն անցնե-
լու կամրջացն համար՝ սոսկականաց ո-
մանց կամ առատաձեռնութեանն և
կամ խզի խայթից երախտագէտ լի-
նելու:

կարաւանատունիքն՝ որը երբեմն բազ-
մաթիւ էին զիսաւոր ճանապարհաց
վրայ, և ամենամեծ նպաստ կը մատու-
ցանէին վաճառականութեան, ընդ-
հանրապէս աղէկ շնչնքեր են, բարձր և
աշտարակովք պաշտպանեալ որմովք
պատաժ, ու բաւականապէս ամբա-
ցուած՝ յարձակման մը զէմ դնելու
համար: Պարսկաստանի բարգաւաճա-
նաց նախանձաւոր ինքնակալքն յաճա-
խեր էին զայնադրենց ընդարձակ տե-
րութեան ամէն կողմն: Շահ Աբաս ա-
նոնցմէ ինն հարիւր իննուուն ի ինն շի-
նել տուեր էր, որով իր ընդարձակա-

**Ճաւալ տէրութեան զանազան կողմեր՝
դիւրին և արագ հաղորդակցութիւն-
ներ հաստատեր էր:**

Այս թագաւորացէն՝ զարդիս կործանեածաւալը կարաւանատանցի մեծ մասն շեն կրնար այլ ևս լաւորերոյն ապաստանարան լինել, այլ սոսկ սրիկայ աւաղակաց բնակութիւն և բոյն եղած են; Միայն ժամանակն չէ շինուածոց աւերումն բերողն, այլ Շահ Աբասայ յաջորդքն անոր վեհանձն գաղափարները գահուն հետ միասին ժամանակած շիննելնուն համար, դժբաղդաբար ժանր գնով վարձեցին զայն. և վարձուորչն ալ իրենց հասն տալ շիարենանիւն համար՝ ստիպուեցան կարաւանները կողպատելու, Այսպիսի զզուելի տնտեսութեան մը հետևանքն չատ չուշացան. վաճառականնութիւնն օր օրուան վրայ տկարացաւ, բքաւ, թագաւորացէն տեղիքն անապատացան, և միայն առանձնական կարաւանաց օգտին ծառացեցին, ուր որ ուղկորդքն մարդասէր ընդունելութիւն մը և խնայողական հիւրասիրութիւն մը կը գտնեն:

թերքի և աղջկ մշակուած ձորոց
մէջն կ'անցնինք, բազմաթիւ են ա-
րօսքն, և ամէն հօսից ետև կը տես-
նուին մատակըն իրենց մնորուկներով։
Արդէն ձիաբուծութիւնն աւանդական
է տեղւայս մէջ։ Դարեհ թագաւորէն և
իր յաջորդներէն ՚ի վեր՝ Ատրպատա-
կանն պարտաւորուած էր արքյայականն
ախոռոց քսան հաղար երիվալրաց հարկ
մը տալ։ Մասերն ՚ի սպառ կը պակ-
սին՝ բլրէ բլուր միապէս ծաւալող քիչ
մը միօրինակ տեսարաննաց մէջ։ շկայ
վերամբարձ ցօղոն մը, կամ թփոտ
թւուուա մը, ուր կարելի լինի ամառան
կիզիչ արևու մը ճառագայթներէն
փախուստ տալու լոյս մ՞ունենայ :

Եպառոց պէս սակաւք են նաև փրփր
զիւղեր և տուներ : Պարսկական հոգուն
վրայ մանելիս ետև, տեսի զբնակիչս
քիչ կամ շատ կարեւոր զիւղից մէջ
խթողին ժողովուած, զթափառական՝
վրանաբնակ, այլ ոչ երբեք զգիւղացին
եղ առահօս և մասհեաւ իսպանածու մէջ

բնակած։ Ուստի Ատրպատականին հիւսիսակողմն ալ՝ իր հոգուն ծանօթք բարեբերութեամբն հանդերձ տիտուր, վայրենի և մեռեալ տեսիլ մը կ'ընճայէ, որոյ երեսյթին՝ և ոչ գաղղիոյ ամենախեղճ գետիներն կրնան գաղափար մը տալ, Գիւղըն անգամ ցիր և ցան են ու ցանցառ, և ուղերըն շատ բազգաւոր կրնայ ինք զիւղը համարել, իւրաքանչիւր հանգուցին մէկ հատ մը գանելով։

Մարանդ՝ մեծ աւան մ'է, երեք կամ չորս հազար բնակչաք. Պտղոմէոսի Մանտակուրանն է, Գրեթէ միջօրէ է՝ երբ ձիերնիս արագ. Վազցընելով՝ որով չարվատարաց անէծքն ալ վրանիս կը ձգենք՝ կը համենիք քաջաքին պարսպը։ Մատիան բոր աստ, եւարա՛շ, կ'աղաղակեն ետենիս ջորեպանքն, ու ձեռքերնին յուսահատարար երկինք կը վերցընեն։ Չեմ հասկնար ու գարձեալ կը շարունակեմ՝ ձիս արշաւեցնել, կարաւանին յուսահատ գանդաղ քալուածքն ազատելու համար։ Սակայն երբ մարդիկն մեզի հասան, հարկ եղաւ սխալմննքս ճանճալու։ Մատիան բոր աստ՝ ըսել է. մատակն յոի է։ Եթէ երբեք գաւակն մեռնի, իմ վասապարար թեթեւամսութիւնս անդարմանելի վասուն պատճառ կը լինի, Խիղճս կը քննեմ. այնչափ աւելի խաղաղ կը թուի ինձ՝ որչափ որ անտեղեակ էի հեծանելոյս սեռին և բնական կացութեանն դարձեալ չըհասկըցայ եւարա՛շ (մեղմնվ) բառիննաշնակութիւնը. բառարանիս մէջ մակրայս աւելոյա կը թարգմանուի։ Այն ատեն կիմանամ որ յետինս պարզ բանաստեղծական մտօք կը գործածուի, և ոչ երբեք սովորական խօսից մէջ կը մոնիւ։ Տաճիկը Արարք և Պարսիկը ամէնին ալ եւաւալ բառը կը գործածեն։

Մարանդ քաղսքն գեղեցիկ գետակի մը ափանց երկայնութեամբն շինուած է, որոյ մէջ արծաթափայլ կազամակըն և թուի կանաչագոյն տռաենին կը բուսնին, ջուրքն այլ և այլ առուակ բաժնուած սրբնթաց զառ.՝

վայր՝ մեծ փողոցին մէջտեղին կ'ընթանան։ Միայարկ տառնքն՝ արևով շրցած աղիւսօք շինուած՝ ծածկուած են տուփարակ ծածքով, որոյ եղերքն՝ ատամնաձեւ շրջապատ մ'է։ Արատը սապէս անպատուհան բնակութեանց մուտքն՝ խոչըր դռնով մը դոցուած է, որոց սենեակիքն միշտ կեդրոնական գաւիթներէն կը լուսաւորուին։ Այսուհանդերձ քանի մը չքեղատես տունք՝ գեաւոյն վրայ նայող գառակումի փայտէ վանդակապատ որմածակ մ'ունին, ուսկից կտնայքն առանց տեսնուելու կը նային. ուսկից նաեւ կրնան դիտուիլ առուակաց մէջ կոխսկատող կարաւանքն, և երբ օդն պարզ լինի՛ հեռաւոր Արարատայ սրածայր գագաթն։

Ըստ Հայկական աւանդութեանց՝ Մարանդայ գաշտալայրըն երեանու գաշտաց հետ ՚ի միասին կը պարծենան նախ բնակուած լինելու՝ յրէնեղեղէն վերջը. Եղյն իսկ նոյն Սուրբ Գրոց իւրեն տռուած երկարակեցութենէն ետքն՝ հոն թաղուած լինելու է։

Կարաւանատունը մոնելու ժամանակ՝ սպիտակ ալեք գերանի մուրաց. Կի մը պատահեցայ, որ թէպէտ հին նահապետաց՝ տարիքը չունէր, սակայն երկար տարիներէ ՚ի վեր տչխարհիս վրայ լինելու էր։ Իր հազուասն նկարագրելու արժանաւոր տեսիլ մը կ'ընծայէր. գիլսարկն կ'ոնաձեւ փափախ մ'էր, ուռենաւոյ ոզորիքի մը վրայ յեցած. Իր աւելի բաղդաւոր ժամանակաց մէջ ծերունին երկու քորեկա (տեսակ մը պարսկական վերնազդեստ) հագած էր, մէկն կապոյտ, միւսն կարմիր. Բայց այն օրն վերի զգեսան այնչափ պատառոսեալ և միւսն այնչափ թել թել եղած էր, որ կարմիր կտորուանքն կապտագոյն զգեստին ծակերէն կ'երեւէին, և առաջին նայուածքով դժուարին կը լինէր այս նորահնար չուխային կազմիթիւնն իմանալ. Զրանկարի ինչպիսի հիանալի՝ առարկեց մը կ'ինչպէս գրգիւեակըն լաւ կը միաբանին տարիներովն յարգելի եղած աքսորելոյն գըլխայն հետ։

բնակարաններ՝ վերջին գիշերը անցուցած գեղջ բնակութենէն վերագոյն է. և եթէ պարսկական լեզուն սպանիցոյն պէս ճոխ լինէր դարձուածովք, մեր երիկեան դադարքն ամենաշափառը վկնետանայից կարդը կը դասէր, պահելով արդի կարաւանատանս փողատա Ճեղագոյն տիտղոսը:

Գաւիթն ընդարձակ է. մենք ալ բըռով սպիտակացած սենեակ մը կը բընկինք, որոյ պատուհանաց շրջանակին ապակոյ տեղ իւղաթուրմ թուղթեր ունին. զառարան մ'ալ դարձեալ, որոյ առջն կարելի է մեզ յնուուլ, սենեկին միսիթարութինը կը բազմապատկէ: Խցին մէկ անկիւնն՝ նեղ սանդղոց գուռն կը բացուի, կ'ելնեմ վըրան ու կը հասնիմ առաստավին վրայ, ուսկից հայեցուածս մերձաւոր տանց մէջ ամենայն հեշտեաւ ներս կը թափանցէ:

Գաւթի մը մէջ՝ քանի մի երիտասարդ կանայք տանուտեառն հետ կը խօսակցին, անշուշտ անոր ազգականքն պիտի լինին, որք տեսնուած լինենին չիմանալով՝ բաց թողեր են երեսնին. աղախին մ'ալ գետինը ծունկ զրած՝ կովուց աղբովն, մանրած յարդով՝ և հողով որմոց նորոգութեան համար պէտք եղած շաղախը կը պատրաստէ: Խոշոր սեաւ կատու մը զգուշութեամբ յառաջ կու գոյ, և յուղուելով՝ կարծես ինքն միայն կը զգայ օտարի մը ներկայութիւնը. պատին ետկը կը թագիմ, էրկանէս լուսանկարի կազմածը կ'ուղեմ, ու կարելոյն չափ արագութեամբ կը յարմարընեմ՝ այս պիսի ներքին գողոտրիկ սեսարան մը՝ պարսկական նախանձայուղութենէն գողանալու փափառով:

Գողութիւնը կատարած և պատուհանաց շրջանակին խնամքով պատաճ՝ գուրս կ'ելնեմ քաղաքը տեսնելու համար: Պազարն ընյիւք լի՛ անմիջապէս մեր բնակարանին մօտ է: Ուտեկիքն այնչափ աժան են՝ որ մեր չարշատուրքն ինչոք մը կատարելու փորձութեան չեն կրնար դիմանալ: Անոնցմէ

մէկն՝ խումբին ճարտասանն՝ մեզի աղերս մը առաջարկելու հրաման կ'ուղէ, ու մատերովն՝ մազերուն և իր Աժտէրիսանի գտակին մէջ տեղն քանի մի փոքր կենդանիներ հալածելով՝ ամենուն կողմանէ երկու բուման կը խընդրէ, ոխար մը ու բրինձ զնելու, և մինչև ՚ի Դավրէմ պէտք եղած կերակուրնինին պատրաստելու համար: Միտքս եկան մէկէն Պ. Օվագամովի բարի խորհուրդն. և ՚ի սկզբան կը ժխտեմ, բայց յետոյ կը հարցընեմ խօսողին թէ ինչ եղան՝ ՚ի ջուղայ տուած կանխիկ վճարքն:

« Միթէ պէտք չէր մեր կանանց և տղայոց թողուլ զայն », կ'ըսէ բարի առաջնորդ :

Այս պատասխանս սիրոս կը շարժէ, և կը յորդորեմ էրիկս՝ կ'ենդանին գնելու պէտք եղած թումանները տալու իրենց:

10 Ապրիլ. — Մեր գիջողութեան վրայ շուտով զղջացինք: Այս առաւօտ մեր ամէն չարշատարքն արբեցութենէ լնդարմացած են:

Կէս հանգուցին՝ Շահ Աբասայ ատեն շինուած ինն հարիւր ինսուն և ինն կարաւանատանց միոյն աւերակաց դիմացը՝ կանդ առինք քանի մի ժամ: Ձեն քառակուսի է, իր աշտարակեալ և կարմրագոյն գեղեցիկ քարաշէն որմունքն՝ կրնային բերդ մի լինել ասպատակի մը ժամանակ: Դուռն մասամբ կործանեալ կապցոյ յախճապակէ և վարդագոյն աղիւսէ սիրուն միւսի ոնով մը զարդարուած է: Այս կարավանատուն՝ կանոնէ չզարտուղելու համար՝ երկար ատեն եղեանաւոր մարդկանց պատսպարան եղած է, և մեր չարշատարքն՝ տերևի մը պէտքարտամբ կը գողզովն՝ երբ կարաւանը կեցընելու և լուսանկարի հանդերձանքը վար առնելու հրաման կու տանք իրենց:

Երբ ընթացքնիս յառաջ վարելով բաւական հեռացած ենք այս երկիւղակի տեղէս, ուղեցոյցներէն մէկն առ իս կը մօտենայ և կ'ըսէ մտերմաբար.

— Ամիս մը կայ, մենք այս անիծեալ տեղս պիտի կողովուուէինք : Այսօրս նուազեալ են աւազակքն, վասն զի գաւառակալ իշխանն՝ Դավթիժու ուստի կանութեան գլխաւորին ոտիցը՝ գաւազանի քառասուն հարուած տալ տուեր է :

— Ի՞նչ յարաբերութիւն կրնայ ինել այն անձին և այն աւազակաց մէջ . չեմ կարծեր որ այնպիսի բարձրասատինան անձ մը ապահովութեան պաշտօնեայ և միանդամայն աւազակաց գըլխաւորն լինի :

— Կը սխալիք, կը պատասխանէ ինձի, աւազակք և դատաւորք՝ կատարեալ միաբանութեամբ կ'ապրին մէջերնին ու մեր միսասովն. սակայն վերջին գաւազանի հարուածներէն յետոյ՝ ոստիկանութեան զլիսաւորն կը յանայ աւազակութիւնները զսպելու :

— Բայց ինչպէս պիտի կարենայ յայսմ յաջողիլ, իր իշխանութենէ ինկալին յետոյ :

— Իր իշխանութիւնն միշտ նոյն է, կը պատասխանէ ինձ զարմացմամբ այն՝ որ պարսից անուաւոր պաշտամանց զիս խեսամուս կ'ուզէ ընել. իր գործածներուն արժանաւոր պատիժն տալէն քանի մի օր վերջը, իշխանն այլ ևս վրէժինդրութեան պատճառ մը չգտնելով անոր վրան, զինքն ոտից ցաւէն սփոփելու համար՝ խալադ կամ պատույ պատմունան մը չնորհեց անոր, և վերջերս՝ իր պաշտաման մէջ վերստին հաստատեց զինքը :

— Այդ անկարելի է. կուսակալն այնպիսի անպատիւ եղած մարդոյ մը չի կրնար միւսանզամ վատահիլ:

— Գաւազտնահարութիւնն ամենեւ ւին անպատուութիւն մը չի բերեր, մանուկ իմ տէր. և գարձեալ, ով սատիկանութեան զլիսաւորէն աւելի կըրնայ նուածել զաւազակութիւնն: Անոնց հետ հաղորդութիւն ունեցաւ, և այժմ շատ աղէկ զիսէ թէ ինչ է իր կրելու պատիժը՝ եթէ գարձեալ անոնց շահը սկսի մոտածել: Որով, ինչա Ալլահ (փառք Աստուծոյ), նորա մեծութեան ոտից գիւրազգածութեան պատճառաւ՝ մենք անվնաս Դավթէ պիտի համենինք :

Այսու հանգերձ ինչ տեսակ վորանգ կրնար մեզի պատահել: Միիթէ Մարանդէ ՚ի Սոֆիա ուղւոյն վրայ նասոած սուրբ տէրփիշն, որ բարձր բարբառով Մեշտի և Գիւրազալայի սուրբ իմամաց օրհնութիւնները կը կարդար անցորդներու վրայ, մասնաւոր դիտմամբ չըյիշեցնց մեզի թէ Ղուրանն՝ զմեր կըրոնից հիմնացիրն՝ ամենէն յարգելի մարգարէից կարզը կը գասէր. և միթէ ոչ չնորհաւորեց մեզի բազդաւոր ուղևորութիւն մը Սիտ-Այլիշա և Սիտահ Մերիէմի անուամբքն :

Այսպէս իրիկուան անվնաս ՚ի Սոֆիա կը մտնէինք . երկարատև եղաւ հանգոյցն, սակայն ԱՄորպատականի մայրաքաղաքին շատ մօտեցած ենք, ուր վաղը աւաւօտ պիտի հասնինք :

Իր շարունակուի :

